
 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 1 / 6
	Դրամական միջոցների կամ պարտատոմսերի ապահովվածությամբ սպառողական վարկի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «18» սեպտեմբեր 20 թ.


Հավելված 1

Վարչության 2020թ. սեպտեմբերի 10-ի թիվ 01/064-344 Լ որոշման


1. Հիմնական պայմաններ			
1.1.	Նպատակ	Սպառողական	
1.2.	Ապահովվածություն	Գրավ	
1.3.	Արժույթ	ՀՀ դրամ	
1.4.	Նվազագույն գումար	100,000 ՀՀ դրամ	
1.5.	Առավելագույն գումար*	100.000.000 ՀՀ դրամ*****	
1.6.	Վարկի ժամկետ (դրամական միջոցների գրավով վարկերի դեպքում)	Ավանդի ժամկետով, սակայն ոչ ավել, քան 60 ամիս	
1.7.	Նվազագույն ժամկետ (Պարտատոմսի ապահովվածությամբ վարկերի դեպքում)	1 ամիս	
1.8.	Առավելագույն ժամկետ (Պարտատոմսի ապահովվածությամբ վարկերի դեպքում)	60 ամիս, չի կարող գերազանցել գրավադրված Արդշինբանկ ՓԲԸ պարտատոմսի ժամկետի ավարտը:	
1.9.	Տոկոսադրույք**	Նույնանուն արժույթով գրավի դեպքում	Տարանուն արժույթով գրավի դեպքում
		«Գրավադրվող միջոցների տոկոսադրույք +1%», բայց ոչ պակաս, քան Բանկում գործող դրամային ժամկետային ավանդի առավելագույն տոկոսադրույքը, իսկ Արդշինբանկ ՓԲԸ պարտատոմսի գրավադրման դեպքում՝ նաև ոչ պակաս քան տվյալ պահին Արդշինբանկ ՓԲԸ կողմից առաջարկվող պարտատոմսի առավելագույն տարեկան տոկոսադրույքը:	«Գրավադրվող միջոցների տոկոսադրույք +4%», բայց ոչ պակաս, քան Բանկում գործող դրամային ժամկետային ավանդի առավելագույն տոկոսադրույքը, իսկ Արդշինբանկ ՓԲԸ պարտատոմսի գրավադրման դեպքում՝ նաև ոչ պակաս քան տվյալ պահին Արդշինբանկ ՓԲԸ կողմից առաջարկվող պարտատոմսի առավելագույն տարեկան տոկոսադրույքը:
1.10.	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն****	Նույնանուն արժույթով գրավի դեպքում	Տարանուն արժույթով գրավի դեպքում
1.11.	Տոկոսագումարները վարկը ձևակերպելու պահին վճարելու դեպքում	100%	Գրավի արժույթը ԱՄՆ դոլար կամ Եվրո
			100%

 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 2 / 6
	Դրամական միջոցների կամ պարտատոմսերի ապահովվածությամբ սպառողական վարկի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «18» սեպտեմբեր 20 թ.


			Գրավի արժույթը ՌԴ ռուբլի	70%
1.12.	1. Գրավադրված միջոցների տոկոսները ժամկետի վերջում վճարվելու դեպքում. Վարկի տոկոսագումարները՝ 1) ամսական, 2) եռամսյակային պարբերականությամբ կամ 3) Վարկի ժամկետի ավարտին վճարելու դեպքում	94%	Գրավի արժույթը ԱՄՆ դոլար կամ Եվրո	94%
			Գրավի արժույթը ՌԴ ռուբլի	60%
1.13.	2. Գրավադրված միջոցների տոկոսները ամսական/եռամսյակային պարբերականությամբ վճարվելու դեպքում. Վարկի տոկոսագումարները՝ 1) ամսական, կամ 2) եռամսյակային պարբերականությամբ վճարելու դեպքում	94%	Գրավի արժույթը ԱՄՆ դոլար կամ Եվրո	94%
			Գրավի արժույթը ՌԴ ռուբլի	60%
1.14.	3. Գրավադրված միջոցների տոկոսները ամսական/եռամսյակային պարբերականությամբ վճարվելու դեպքում. Վարկի տոկոսագումարները ժամկետի վերջում վճարելու դեպքում	87%	Գրավի արժույթը ԱՄՆ դոլար կամ Եվրո	87%
			Գրավի արժույթը ՌԴ ռուբլի	53%
2. Միջնորդավճարներ				
2.1.	Դիմում-հայտի ուսումնասիրության վճար	Չի սահմանվում		
2.2.	Տրամադրման (երկարաձգման) միջնորդավճար	Բանկի կողմից թողարկված պարտատոմսի գրավով վարկերի դեպքում՝ 0.01% տրամադրվող վարկի պայմանագրային գումարից, այլ դեպքերում՝ չի սահմանվում: Միջնորդավճարը գանձվում է տրամադրված վարկային միջոցներից:		
2.3.	Վարկի սպասարկման վճար	Չի սահմանվում		
3. Վարկառուին և գրավատուին ներկայացվող պահանջներ				
3.1.	Վարկառու	18 տարեկանը լրացած ֆիզիկական անձ		
3.2.	Գրավատու	Վարկառու կամ Բանկի հետ ավանդային պայմանագիր կնքած այլ ֆիզիկական անձ կամ Արդշինբանկ ՓԲԸ պարտատոմսի սեփականատեր		
3.3.	Վարկառուի/գրավատուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Չեն սահմանվում		
3.4.	Վարկային պարտավորությունների նկատմամբ պահանջներ	Չեն սահմանվում		
3.5.	Քաղաքացիության և գրանցման նկատմամբ պահանջներ	Չեն սահմանվում		

 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 3 / 6
	Դրամական միջոցների կամ պարտատոմսերի ապահովվածությամբ սպառողական վարկի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «18» սեպտեմբեր 20 թ.

3.6.	Անձնական տվյալների նկատմամբ պահանջներ	<ul style="list-style-type: none"> • բջջային հեռախոսահամարի առկայություն • էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն
4. Գրավի առարկային ներկայացվող պահանջներ		
4.1.	Գրավի առարկա	<ul style="list-style-type: none"> • Որպես ավանդ Բանկում ներդրված դրամական միջոցներ և դրա նկատմամբ պահանջի իրավունք • Բանկի կողմից թողարկված պարտատոմս և դրա նկատմամբ պահանջի իրավունք
4.2.	Գրավադրվող միջոցների քանակ	Մեկ վարկը կարող է ապահովված լինել Բանկում ներդրված մի քանի ավանդով կամ Բանկի կողմից թողարկված մի քանի պարտատոմսով, եթե բոլորի համար գործում են սպասարկման նույն պայմանները (տոկոսադրույք, արժույթ, տոկոսների վճարման կարգ)
4.3.	Գրավի առարկայի նկատմամբ սահմանափակումներ	<p>Ավանդային պայմանագրով Բանկում ներդրված ավանդը կամ թողարկված պարտատոմսը և դրանց նկատմամբ պահանջի իրավունքը կարող են հանդիսանալ գրավի առարկա, եթե դրանցում նշված միջոցները</p> <ol style="list-style-type: none"> 1. արգելանքի տակ չեն, 2. չեն հանդիսանում այլ (այդ թվում՝ երրորդ անձանց տրամադրված) վարկի (վարկային գծի, երաշխիքի և այլ պարտավորության) ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկա, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցով ապահովված բոլոր, ներառյալ նոր տրամադրվող, վարկերի հանրագումարի համար պահպանվում է սույն պայմանների 1.10. կետով սահմանված առավելագույն վարկ/գրավ հարաբերակցությունը
5. Վարկի տրամադրում և սպասարկում		
5.1.	Տրամադրման/հայտի ներկայացման վայր	Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Գլխամասային գրասենյակ
5.2.	Տրամադրման եղանակ	Կանխիկ կամ անկանխիկ
5.3.	Տրամադրման ձև	Միանվագ
5.4.	Մայր գումարի մարումներ	Ժամկետի վերջում
5.5.	Տոկոսագումարների մարումներ	1. Վարկի ձևակերպելու պահին: Ընդ որում նախապես վճարված տոկոսագումարը վարկի մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վերահաշվարկվում է և ենթակա է հետ վերադարձման միայն վարկի ամբողջական մարման դեպքում:
		2. Ամսական
		3. Եռամսյակային կամ
		4. Վարկի ժամկետի ավարտին:


 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 4 / 6
	Դրամական միջոցների կամ պարտատոմսերի ապահովվածությամբ սպառողական վարկի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «18» սեպտեմբեր 20 թ.

<p>5.6.</p>	<p>Ապահովման միջոցի հաշվին վարկի (մայր գումարի, տոկոսների, տուգանքների, տույժերի և այլ վճարների՝ առկայության դեպքում, այսուհետ նաև՝ վարկ) մարում (դրամական միջոցների գրավով վարկերի դեպքում)</p>	<p>1. Վարկառուի (գրավատուի) կողմից Վարկի մարման ժամանակացույցի համաձայն հերթական մարման պարտավորությունը չկատարվելու դեպքում (մինչև վարկի գործողության ավարտը) Բանկն իրավունք ունի՝</p> <p>1) Ընթացիկ պարտքի չափով իրականացնել գրավի (ավանդի) գումարի նվազեցում և ընթացիկ պարտավորության մարում՝ առանց Վարկառուին (գրավատուին) լրացուցիչ ծանուցելու, իսկ ավանդի մնացած մասը շարունակում է սպասարկվել ավանդային պայմանագրի պայմանների համաձայն:</p> <p>2) Ավանդի հաշվին մարման ժամանակացույցի համաձայն վարկի ընթացիկ պարտավորության ավտոմատ երկու հերթական մարումներից հետո հաճախորդի կողմից մարման ժամանակացույցի համաձայն պարտավորության հերթական չվճարման դեպքում լուծել Վարկառուի (գրավատուի) ավանդային պայմանագիրը և իրականացնել Վարկի ամբողջական մարում ավանդի գումարի հաշվին՝ այդ մասին վարկառուին (գրավատուին) նախապես ծանուցելով՝ ծանուցման մեջ նշված կարգով և ժամկետում: Այն դեպքում, երբ ավանդի հաշվին Վարկի ամբողջական մարումից հետո առաջանում է դրական տարբերություն՝ գերազանցող գումարը փոխանցվում է Վարկառուի (գրավատուի) բանկային հաշվին: Ընդ որում՝ ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների վերահաշվարկը իրականացվում է ավանդային պայմանագրի պայմանների համաձայն:</p> <p>2. Բանկն իրավունք ունի Վարկի մարման վերջնաժամկետին Վարկն ամբողջությամբ մարված չլինելու դեպքում առանց Վարկառուին (գրավատուին) լրացուցիչ ծանուցելու կամ Վարկն ամբողջությամբ ժամկետանցվելու դեպքում լուծել Վարկառուի (գրավատուի) ավանդային պայմանագիրը (ավանդի ժամկետը լրացած չլինելու դեպքում) և իրականացնել Վարկի ամբողջական մարում ավանդի գումարի հաշվին՝ այդ մասին Վարկառուին (գրավատուին) նախապես ծանուցելով՝ ծանուցման մեջ նշված կարգով և ժամկետում: Այն դեպքում, երբ ավանդի հաշվին Վարկի ամբողջական մարումից հետո առաջանում է դրական տարբերություն՝ գերազանցող գումարը փոխանցվում է Վարկառուի (գրավատուի) բանկային հաշվին: Ընդ որում՝ ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսների վերահաշվարկը իրականացվում է ավանդային պայմանագրի պայմանների համաձայն:</p> <p>3. Վարկառուի (գրավատուի) ցանկությամբ վարկի գործողության ընթացքում կամ վերջնաժամկետին կարող է լուծվել ավանդային պայմանագիրը և գումարը ուղղվել Վարկի ամբողջական մարմանը: Ընդ որում, ավանդի ժամկետը լրացած չլինելու դեպքում ավանդի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարների վերահաշվարկը կատարվում է ավանդային պայմանագրի համաձայն:</p>
-------------	--	--

 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 5 / 6
	Դրամական միջոցների կամ պարտատոմսերի ապահովվածությամբ սպառողական վարկի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «18» սեպտեմբեր 20 թ.

5.7.	Վարկի երկարաձգում	<p>Իրականացվում է հաճախորդի դիմումի համաձայն, հետևյալ կարգով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Դրամական միջոցների գրավով վարկերի դեպքում՝ ավանդի երկարաձգված ժամկետի չափով, ընդ որում՝ երկարաձգումից հետո վարկի ժամկետը չպետք է գերազանցի պայմաններով սահմանված առավելագույն ժամկետը, 2. Բանկի կողմից թողարկված պարտատոմսի գրավադրմամբ վարկի երկարաձգման համար գրավադրված պարտատոմսի մարման ժամկետը պետք է հավասար կամ մեծ լինի վարկի երկարաձգման վերջնաժամկետից, 3. Բանկում ավանդների տրամադրման նույն պայմանների բացակայության դեպքում երկարաձգման պահին համապատասխանաբար վերանայվում են նաև վարկի պայմանները, 4. Նոր պարտատոմսի և գրավադրված պարտատոմսի պայմանների տարբերության դեպքում երկարաձգման պահին համապատասխանաբար վերանայվում են նաև վարկի պայմանները, 5. Վարկի երկարաձգման դիմումը հաճախորդի կողմից ներկայացվում է ոչ ուշ, քան վարկի ժամկետի ավարտից 2 աշխատանքային օր առաջ
6. Վարկի տրամադրման/երկարաձգման վերաբերյալ որոշման կայացում		
6.1.	Դրական որոշման գործոններ	Վարկառուն/գրավատուն, ինչպես նաև գրավի առարկան բավարարում են սույն պայմաններով սահմանված պահանջներին
6.2.	Որոշման կայացման ժամկետ*****	Առավելագույնը 1 աշխատանքային օր
6.3.	Վարկի տրամադրման/երկարաձգման ժամկետ	Որոշման կայացումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օր
7. Տույժեր և տուգանքներ		
7.1.	Ժամկետանց տոկոսագումարների գծով	48% տարեկան
7.2.	Ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոսներ	24%
7.3.	Վարկի գումարի ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում	Չի սահմանվում

- Մեկ փոխառուի սահմաչափը չի կարող գերազանցել 100.000.000 ՀՀ դրամ
- ** Վարկի անվանական տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:
Տոկոսագումարի հաշվարկման օրինակ
Վարկային գծի սահմանաչափ – 5.000.000 ՀՀ դրամ
Օգտագործված մաս-1.825.000 ՀՀ դրամ
Վարկի տարեկան տոկոսադրույք – 20%
Տարվա օրերի քանակ – 365 օր
Օրական կուտակվող տոկոսի մեծությունը կկազմի – 1000 ՀՀ դրամ (տոկոսագումարը կկազմի 1.825.000 * 20% / 365 = 1000 ՀՀ դրամ)
- * ** Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ

 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 6 / 6
	Դրամական միջոցների կամ պարտատոմսերի ապահովվածությամբ սպառողական վարկի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «18» սեպտեմբեր 20 թ.

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է ներքոհիշյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{360}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է (APR),

A – Վարկի գումարը (Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված վարկի սկզբնական գումարը),

n – Վարկի մարմանն ուղղված վճարի թիվը,

N – Վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը,

K_n – Վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը,

D_n – Վարկի տրամադրման օրից մինչև Վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով,

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկային պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է վարկային պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ վարկային պայմանագիրը գործելու է Հաճախորդի առաջարկ-դիմումն նշված ժամկետով, և կողմերը պատշաճ կերպով ու պայմանավորված ժամկետներում կատարելու են վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Մարման արտոնյալ ժամանակահատվածը (առկայության դեպքում) հաշվի չի առնվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

Տարվա մեջ օրերի բազային թիվը ընդունված է տարվա փաստացի օրացուցային օրերի քանակը,

Հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կլորացվում է առնվազն մինչև մեկ հարյուրերորդական և բազմապատկվում է 100-ով՝ տոկոսային մեծություն ստանալու համար:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում չեն ներառվում՝

- Լրացուցիչ վճարային քարտի թողարկման և տարեկան սպասարկման վարձը Կրեդիտի մարման պարտավորության խախտման և վճարային սահմանաչափի գերազանցման համար հաշվարկվող տոկոսները, տուժանքը (տույժերը և տուգանքները),
- Կանխիկացման և կանխիկի մուտքագրման համար միջնորդավճարները,
- Տարբեր տեսակի փաստաթղթերի տրամադրման համար վճարները,
- Արժույթի փոխարկման համար միջնորդավճարները:

**** Տարանուն արժույթների դեպքում առավելագույն սահմանաչափը հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ օրվա ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքը:

***** Հաճախորդի Բանկում գործող դրամական միջոցներով ապահովված վարկերի մնացորդների հանրագումարը 100.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթը գերազանցելու դեպքում, վարկի պայմանները հաստատվում են պայմանագրային հիմունքներով և որոշման կայացման գործընթացը կարող է գերազանցել 1 աշխատանքային օրը:

«Արդշինբանկ» ՓԲԸ կողմից թողարկված պարտատոմսի գրավով վարկերի դեպքում պարտատոմսերի գրավադրման (գրավի գրանցման) միջնորդավճարներ չեն գանձվում:

Զգուշացում՝

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստրին և ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորտինգ ՓԲԸ-ին: